

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-753-09.04.2015-ՍՀ-010/0) վերաբերյալ:

Հանրապետության ժողովրդագրական արդի իրավիճակում կարևորվում է ընտանիքներին, մասնավորապես, բազմազավակ, ցուցաբերվող աջակցության հետագա ընդլայնումը, նոր կառուցակարգերի մշակումն ու ներդրումը: Այդ կապակցությամբ միանշանակ ողջունելի են բազմազավակ ընտանիքների կարիքների հետագա բարելավմանը միտված նոր նախաձեռնությունները:

Կարևորելով խնդրո առարկա նախագիծը, այնուհանդերձ, պետք է առանձնացնել հետևյալ նկատառումները՝

1. Նախագծի 1-ին հոդվածում նշվում է, որ օրենքը կարգավորում է բազմազավակ ընտանիքների արտոնությունների հետ կապված հարաբերությունները և այդ արտոնություններից բազմազավակ ընտանիքների օգտվելու կարգը, այնինչ նման կարգավորում և կարգ նախագծում առկա չեն:

2. Հստակեցման կարիք ունի նախագծի 3-րդ հոդվածում ներկայացված «բազմազավակ ընտանիք» հասկացությունը, շեշտադրման կարիք ունի որոշակի թվով, տվյալ դեպքում՝ չորս, երեխայի՝ ամուսնական մեկ զույգի կամ միայնակ ծնողի կողմից խնամվելու հանգամանքը:

3. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններում բնակվող բազմազավակ ընտանիքների աշխատող անդամների եկամտային հարկը նվազեցնել 50 տոկոսով: Համաձայն 2011 թվականի մարդահամարի արդյունքների՝ Հայաստանի Հանրապետությունում առկա 763584 տնային տնտեսություններից 4 և ավելի 0-17 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների թիվը կազմում է 13658, որոնցից 3462-ը բնակվում են բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում (2355-ը՝ բարձր լեռնային, իսկ 1107-ը՝ սահմանամերձ): Ստացվում է, որ, նախ, արտոնություններ են տրվում բազմազավակ ընտանիքներին, որոնցից առանձնացվում է արտոնյալների նոր խումբ: Կարծում ենք, որ բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքներին արտոնություններ տալու խնդիրը պետք է դիտարկել նմանատիպ համայնքների ամբողջ բնակչության աջակցման համատեքստում: Հարկ է նշել, որ, որպես առաջին քայլ, 2014 թվականի դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի կիրարկումն ապահովվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ, ըստ որի Հայաստանի Հանրապետության Արարատի, Վայոց ձորի, Գեղար-

քունիքի և Տավուշի մարզերի սահմանամերձ 32 համայնքների բնակչությունն ստացել է գազի, էլեկտրաէներգիայի և ոռոգման ջրի վարձավճարի 50 տոկոս զեղչի իրավունք: Բացի դրանից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման N 19 հավելվածով հաստատված սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությունների աջակցության ծրագրով, որն առաջնահերթ կարգով իրականացվում է բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում, առաջնահերթությունը տրվում է հող օգտագործող այն ընտանիքներին, որոնք ունեն երկու և ավելի անչափահաս երեխա:

Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 460-Ն որոշմամբ առաջնահերթ փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների բնակիչների՝ մինչև 1993 թվականի հունիսի 10-ը նախկին ԽՍՀՄ խնայբանկում ներդրած ավանդները:

4. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և 10-րդ մասերով բազմազավակ ընտանիքների համար նախատեսվում են հարկային արտոնություններ, մասնավորապես, եկամտային հարկի և գույքահարկի 50 տոկոս նվազեցում: Այս կապակցությամբ նշված արտոնությունների նախատեսումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Եկամտային հարկի մասին» և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթներին, քանի որ վերջիններս նման արտոնությունների սահմանում չեն նախատեսում: Ավելին՝ բազմազավակ ընտանիքի առաջին ավտոմեքենայի գույքահարկը 50 տոկոս նվազեցումով հարկելու առաջարկության ընդունման արդյունքում անհրաժեշտ է լինելու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցել տեղական բյուջեների եկամուտների կորուստները:

5. Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ներկայացված առաջարկության հետ կապված՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համաձայն Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2009 թվականի օգոստոսի 3-ի «Թանգարանի մշտական ցուցա-

դրության այցելության և բացատրության (էքսկուրսիայի) տոմսերի գների և արտոնությունների մասին» N 458-Ա հրամանի, բնակչության սոցիալական տարբեր խմբերին, այդ թվում՝ բազմազավակ ընտանիքներին, մշակութային հաստատություններ (ցուցահանդեսներ, թանգարաններ) անվճար այցելության հնարավորությունը ներկայումս ընձեռված է:

6. Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասի հետ կապված՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի համաձայն ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 30.00 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաներն ունեն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

7. Հետագա քննարկումների կարիք ունի 4-րդ հոդվածի 7-րդ մասով առաջարկվող արտոնությունը: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետության բազմազավակ ընտանիքների հիմնական կարիքների գնահատում, սոցիալական խնդիրների վերհանում» ընտրանքային հետազոտության համաձայն ավելի քան 7000 բազմազավակ ընտանիքների զգալի մասն ապրում է խիտ բնակեցված և գերբնակեցված կացարաններում, և վերջիններիս նորմին բավարարող բնակմակերես տրամադրելու համար անհրաժեշտ է շուրջ 14,6 միլիարդ դրամ: Եվ դա այն դեպքում, երբ բազմազավակ մեկ ընտանիքին ընկնող միջին ամսական եկամուտը, համաձայն ուսումնասիրության, կազմել է 117.145 դրամ: Նշվածից հետևում է, որ նախքան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների 0.1 տոկոսը բազմազավակ ընտանիքների կողմից ձեռք բերվող առաջին բնակարանի համար հիփո-

թեքային վարկի մարման համար նախատեսելը, նախ անհրաժեշտ է ունենալ բազմա-  
զավակ ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր:

Նախագծում հիմնական շեշտադրումը կատարված է նյութական բաղադրիչի վրա, այնինչ, ոչ պակաս կարևոր են նաև բազմազավակ ընտանիքների բարոյահոգեբանական աջակցության և կրթական խնդիրները: Այս առումով հարկ է նշել, որ 2014 թվականի հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի 27-րդ հոդվածով սահմանվեց Ծնողական փառքի մեդալը, որով կպարգևատրվեն 6 և ավելի զավակ դաստիարակած և դաստիարակող այն ընտանիքները, որոնք զավակների առողջության, կրթության, ֆիզիկական, հոգևոր և բարոյական լիարժեք ու ներդաշնակ զարգացման համար ապահովել են անհրաժեշտ պայմաններ և որոնք օրինակ են ծառայում զավակների դաստիարակության և ընտանիքի ամրապնդման գործում: Բացի դրանից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի N 356-Ա որոշմամբ 2014 թվականի ապրիլից 2015 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածը հայտարարվեց Ընտանիքի տարի, որի շրջանակներում տեղի ունեցան ընտանիքների և ընտանեկան մասնագիտական դինաստիաների մեծարման բազմաթիվ միջոցառումներ: Հաշվի առնելով ժողովրդագրական գործընթացներում բարոյահոգեբանական բաղադրիչի դերն ու նշանակությունը՝ ապագայում ևս դրանք կկրեն շարունակական բնույթ:

Կարևորելով նախագծի բարի նպատակադրումները՝ միաժամանակ պետք է նշել, որ արդեն իսկ պատրաստ է Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրի նախագիծը, որի շրջանակներում նախատեսվում են բազմազավակ ընտանիքների սոցիալական և բարոյահոգեբանական աջակցության

հետագա ընդլայնմանը միտված կոնկրետ առաջարկություններ, որոնց քննարկմանը կիրավիրվեն բոլոր շահագրգիռ կողմերը:

8. Հարկ ենք համարում նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականության համաձայն, փոքր ձեռնարկատիրական գործունեություն նախաձեռնելու աջակցության նախապատվությունը տրվում է արտադրության և ծառայությունների ոլորտում գործող, նորարարություններ ներդնող, ժամանակակից ու մաքուր տեխնոլոգիաներ կիրառող, հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող՝ գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին, որը կարգավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին 2015 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 217-Ն որոշման 4-րդ՝ «Ծրագրի իրականացման սկզբունքները» գլխի 2-րդ կետով նախատեսված ծրագրով:

9. Նախագծում առկա են լրամշակման, խմբագրման և հստակեցման կարիք ունեցող դրույթներ: Այսպես՝

1) նախագծի 3-րդ հոդվածով սահմանվել են «բազմազավակ ծնող կամ բազմազավակ ծնողին հավասարեցված անձ» հասկացությունները և հետևապես նախագծի մնացած դրույթներում չորս և ավելի երեխաներ ունեցող ծնողներին վերաբերող դրույթներ սահմանելիս անհրաժեշտ է նշել «բազմազավակ ծնող կամ բազմազավակ ծնողին հավասարեցված անձ»՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց չի թույլատրվում իրավական ակտով տալ հասկացության կամ տերմինի սահմանումը, եթե այդ հասկացությունը կամ տերմինը չի գործածվելու տվյալ իրավական ակտում.

2) նախագծի 4-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանվում է, որ բազմազավակ ընտանիքներին փոքր բիզնես սկսելու համար վարկ վերցնելիս տրվում է առաջնահերթություն:

Նշված ձևակերպումն անորոշ է և պարզ չէ, թե նշված առաջնահերթությունն ինչին է առնչվում և վերջինս ինչ արտոնություն է նախատեսում բազմազավակ ընտանիքների համար: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հստակեցնել նշված դրույթները:

Ընդհանուր առմամբ նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ, 7-րդ և 10-րդ մասերով նախատեսվող արտոնությունները կհանգեցնեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների (ֆինանսական գնահատականը բացակայում է), որոնք նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով, մինչդեռ նախագծի ուժի մեջ մտնելը նախատեսված է 2016 թվականի հունվարի 1-ից:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը լրացուցիչ քննարկումների և լրամշակման կարիք ունի:

Ներկայացված նախագիծը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Նախագծի՝ ներկայացված տեսքով ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում անհրաժեշտ փոփոխությունները կկատարվեն չորսամսյա ժամկետում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՌՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն որոշակի դրական ազդեցություն կունենա առողջապահության բնագավառի վրա՝ բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման մատչելիության բարձրացման մասով:



## ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

### **«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում կստեղծվեն նպաստավոր պայմաններ բազմազավակ ընտանիքների համար, ինչպես նաև կկարգավորվեն բազմազավակ ընտանիքների արտոնություններից օգտվելու հարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին»

**Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝  
փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման  
ազդեցության գնահատման**

«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով կարգավորվում են բազմազավակ ընտանիքների արտոնությունների հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ ի թիվս այլ արտոնությունների առաջարկվում է բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններում բնակվող բազմազավակ ընտանիքների աշխատող անդամների եկամտային հարկը նվազեցնել 50 տոկոսով, ինչպես նաև հնարավորություն ընձեռել անվճար օգտվելու ՀՀ ներքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից՝ անկախ սեփականության ձևից և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա **ազդեցություն չի նախատեսվում:**

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՈՒՆ**

### **«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

1. Նախագծի 4-րդ հոդվածի

ա. 1-ին և 2-րդ մասերով առաջարկվում է սահմանել, որ՝

- ՀՀ բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններում բնակվող բազմազավակ ընտանիքների աշխատող անդամների կողմից ստացվող եկամուտներից հաշվարկվող եկամտային հարկը նվազեցվում է 50 տոկոսով,

- բազմազավակ ընտանիքների կոմունալ ծախսերը (գազ, ջուր, էլեկտրաէներգիա) հարկվում են 50 տոկոս նվազեցումով.

բ. 5-րդ մասով նախատեսվում է 4 և ավելի երեխաներ ունեցող ծնողներին տալ ՀՀ ներքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից անկախ սեփականության ձևից (բացի տաքսուց) անվճար օգտվելու իրավունք: ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի N 1353-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 27-րդ կետի համաձայն՝ քաղաքացիներին զեղչ սակագներով կամ անվճար՝ առանց նախապես տոմս տալու ծառայություններ (մերձքաղաքային և ներքաղաքային տրանսպորտ, ճոպանուղի) մատուցող կազմակերպությունները նշված կարգի 5-րդ բաժնով սահմանված կարգով կատարված հաշվարկների հիման վրա կազմում են իրենց կողմից ներքին (լոկալ) ակտով սահմանված ձևի հաշվարկ, որը հիմք է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 52<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն ՀՀ ռեզիդենտի հաշվետու տարվա շահութահարկի, իսկ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով շահութահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարողների համար՝ հաստատագրված վճարի հաշվետու ամսվա գումարից նվազեցումներ կատարելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական:

2. Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ, 7-րդ և 10-րդ մասերով նախատեսվող արտոնությունները, այն է՝ պետական թանգարանների, մշակութային տների, ցուցահանդեսների, թատրոնների մուտքի համար սահմանված վճարներից ազատում, վարձով բնակվելու դեպքում բնակվարձի ամսական գումարի 30 տոկոսի վճարում ՀՀ պետական բյուջեից, պետբյուջեի եկամուտների 0.1 տոկոսի հատկացում հիփոթեքային վարկից օգտվող բազմազավակ ընտանիքներին՝ ձեռքբերած առաջին բնակարանի վարկի ամսական տոկոսները վճարելու համար, ինչպես նաև բազմազավակ ընտանիքների համար գնված առաջին մեքենայից գանձվող գույքահարկի նվազեցում 50 տոկոսով (վերջինս կհանգեցնի գույքահարկի գծով համայնքների բյուջեների եկամուտների կորուստների պետբյուջեից փոխհատուցման անհրաժեշտության) կհանգեցնեն ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության, որի կոնկրետ չափը որոշել հնարավոր չէ համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով:

Նախագծի ընդունումը ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

## Եզրակացություն

### «Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

- ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.
- բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն**:

Պ-753-09.04.2015-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ I**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների արտոնությունների հետ կապված հարաբերությունները, սահմանում է բազմազավակ ընտանիքների արտոնություն հասկացությունը, արտոնությունների տեսակները, արտոնություններից օգտվելու կարգը:

**Հոդված 2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին**

Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներից:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

**Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

բազմազավակ ընտանիք՝ ընտանիքում չորս եւ ավելի երեխա ունեցող ընտանիքներ.

բազմազավակ ծնող կամ բազմազավակ ծնողին հավասարեցված անձ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, որի խնամքի տակ գտնվում են չորս եւ ավելի երեխաներ.

բազմազավակ ընտանիքի անդամ՝ ընտանիքում չորս եւ ավելի երեխաներ խնամող ծնողները կամ բազմազավակ ծնողին հավասարեցված անձինք, բազմազավակ ընտանիքի երեխաները.

բազմազավակ ընտանիքների արտոնություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բազմազավակ ընտանիքներին տրամադրվող առավելություններ:

**Հոդված 4. Բազմազավակ ընտանիքներին հասանելիք արտոնությունները**

Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքներն օգտվում են հետեւյալ արտոնություններից.

1. Հայաստանի Հանրապետության բարձր լեռնային եւ սահմանամերձ շրջաններում բնակվող բազմազավակ ընտանիքների աշխատող անդամներից եկամտային հարկը նվազեցվում է 50 տոկոսով:
2. Բազմազավակ ընտանիքների կոմունալ ծախսերը (գազ, ջուր, էլեկտրոէներգիա) հարկվում են 50 տոկոս նվազեցումով:
3. Բազմազավակ ընտանիքների անդամները ազատվում են պետական թանգարանների, մշակույթի տների, ցուցահանդեսների, թատրոնների մուտքի համար սահմանված վճարներից:
4. Բազմազավակ ընտանիքների անչափահաս անդամները մինչեւ չափահաս դառնալը օգտվում են անվճար բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու իրավունքից:
5. 4 եւ ավելի երեխա ունեցող ծնողներն ունեն ՀՀ ներքաղաքային ուղեորատար տրանսպորտի բոլոր տեսակներից՝ անկախ սեփականության ձեւից (բացի տաքսուց) անվճար օգտվելու իրավունք:
6. Վարձով բնակվող բազմազավակ ընտանիքների բնակարանավարձի ամսական գումարի 30 տոկոսը վճարվում է ՀՀ պետական բյուջեից, եթե ընտանիքի ամսական եկամտի եւ երեխաների թվի հարաբերակցությունը փոքր է ամսական վարձավճարի մեծությունից:
7. Յուրաքանչյուր բյուջետային տարի ՀՀ պետական բյուջեի եկամուտների 0.1 տոկոսը հատկացվում է հիպոթեկային վարկից օգտվող բազմազավակ ընտանիքների առաջին բնակարանի վարկի ամսական տոկոսները վճարելու նպատակով:
8. ՀՀ պետական բյուջեից հիպոթեկային վարկի տոկոսների մարման նպատակով գումար չի հատկացվում այն բազմազավակ ընտանիքներին, որոնց ամսական եկամտի եւ երեխաների թվի հարաբերակցությունը գերազանցում է հիպոթեկային վարկի մարման ամսական տոկոսավճարի մեծությունից:
9. Գյուղական համայնքներում բնակվող բազմազավակ ընտանիքներին տրվում է առաջնահերթություն հողի վարձակալման համար հայտարարված մրցույթներում:
10. Բազմազավակ ընտանիքների համար գնված առաջին մեքենայից գանձվող գույքահարկը նվազեցվում է 50 տոկոսով:
11. Բազմազավակ ընտանիքներին՝ փոքր բիզնես սկսելու համար, վարկ վերցնելիս տրվում է առաջնահերթություն:

**Հոդված 5. Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների արտոնություններից օգտվելու կարգը**



Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների արտոնություններից օգտվելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

**Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:**

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը պայմանավորված է ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածով սահմանված, Հայաստանի Հանրապետությունը որպես սոցիալական պետություն հռչակող իրավական նորմի կիրառումամբ եւ Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների համար նպաստավոր պայմանների ստեղծման անհրաժեշտությամբ :

Հաշվի առնելով բազմազավակ ընտանիքների դերն ու կարելիությունը սերունդների վերարտադրման եւ հայ գենի շարունակականության ապահովման հարցում, ապա՝ օրենսդրորեն ամրագրելով բազմազավակ ընտանիքներին պետականորեն հասանելիք արտոնությունների ձեւերն ու տեսակները, դրանով իսկ կնպաստենք Հայաստանում բազմազավակ ընտանիքների թվի ավելացմանը:

Ի նկատի ունենալով Հայաստանում վերջին տարիներին նկատվող ծնելիության տեմպերի նվազեցումը, այս օրենքը կարող է խթան հանդիսանալ երիտասարդ զույգերի համար ընտանիքում ավելի շատ երեխաներ ունենալու ուղղությամբ դրական որոշում կայացնելու հարցում:

Օրենսդրորեն սահմանելով բազմազավակ ընտանիքների արտոնություններ՝ պետությունը հիմքեր է ստեղծում վերջիններիս պետության կողմից պաշտպանված եւ գնահատված լինելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ «Բազմազավակ ընտանիքների արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումով կկարգավորվեն բազմազավակ ընտանիքների արտոնություններից օգտվելու հարաբերությունները, այն նաեւ խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում ծնելիության տեմպերի աճման եւ հայ գենի վերարտադրելիությանը: Սերունդների վերարտադրողականության տեմպերի խթանումը, հետեւաբար նաեւ Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների թվի ավելացումը կարելի է ապագայում հնարավոր ժողովրդագրական խնդիրներից խուսափելու տեսանկյունից եւս: